ԲԱՐՁՐԱՇԵՆ

Գյուղը գտնվում է Գյումրի-Արմավիր մայրուղուց մոտ 4կմ հարավ, քարքարոտ ու սևահողային լանդշաֆտով սարահարթին, ծովի մակերևույթից 1700 մ բարձրության վրա: Բնակավայրի կենտրոնում Ս.Աստվածածին կիսավեր եկեղեցին է, խաչաձև հատակագծով, կենտրոնագմբեթ հորինվածքով, բնորոշ VII դարին: Ի տարբերություն արևելյան կիսակլոր աբսիդի՝ մյուս երեքը ուղղանկյունաձև են:

30. Ս.ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ. հյուսիսային պատին (խաչաթևին), արտաքուստ, 8 տող.



...ԵՒ ԱՄԻՐՍՊԱՍԱԼԱՐ ...Ա Ո...ԵՒ... / ...ԵՁ ԹՈՂԻ
ՁԻՄ ԱՐՂԼԵԱՄՅԲ: ՀԱԿ ԳԵՂԻՍ... ՄԱՐԳԻ / ...[Թ]ԱԽԱՆՁԵՑԱ
Ի ԲԱՐԻ ԳՈՐՑ ՀԱՒՐ ԻՄՈ... ՀԱՁԴԻՒ / ...ԿՁ ՀԱՐՄՆԷՀԱԿԵ
ՈՐ ՏԵՆԱ ԱՐԱՐ[ԱՔ] ՁՇԱՐԻԱՏ / ...ԵՐԿԱՐԿԵՆԴԱՆՈՒԹԻ[ԼԻՆ]
ՊԱՏՐՈՆԱՑ ՄԵՐՈՑ ԵՒ / ...ՐՑ: ԵԹԷ ՀԱԿԱՌԱԿԻ ՈՔ ԵՒ
ՁԳՐԵԼԱՅԼՍ ԽԱՓ[ԱՆԷ]...[ԼԻՆԻ] / ...[ՄԱ]ՄՆԱԿԻՑ ՅՈՒԴԱԻ
ԵՒ ԿԱԷՆԻ ԵՒ ՆՁՈՎԻ ՅԱՅ ԵՒ / ...ՑՆ ԵՒ ՈՐՔ
ՀԱՍՏԱՏՈՒՆ ՊԱՀԵՆ ԱՒՐՀՆԻՆ ՅԱՅ. ԱՄԷՆ:

Ծանոթ. *Արծանագրությունը միջնադարյան մի կարևոր հարկատեսակի՝ «հարսնէհակ» կամ «հարսանէհակ» եզակի վկայության առիթով արժանացել է Ս.Բարխուդարյանի և Ս.Ավագյանի ուշադրությանը*[20]*: Ցավոք, երկուսն էլ չեն ներկայացրել վիմագրի ամբողջական վերծանությունը՝ և, ինչպես Ս.Բարխուդարյանն է նշում. «Արծանագրության վերականգնման աշխատանքը թողնում ենք, ներկայացնում ենք գծագիր պատճեն»: Վիմագրի բովանդակության մասին Ս.Բարխուդարյանը գրում է հետևյալը. «...սպասալարների օրոք, երաշտի հետևանքով խանձվում են դաշտերը և դրա հետևանքով զեղչվում են մի շարք*

20 ***Ս.Գ.Բարխուդարյան,*** Սոցիալ-տնտեսական բովանդակության արձանագրություններ և դիտողություններ, էջեր հայ ժողովրդի պատմության և բանասիրության (հոդվածների ժողովածու), Երևան, 1971, էջ 89, ***Ս.Ա.Ավագյան,*** ՀԱԲ, էջ 161:

հարկեր, որոնցից չորրորդ տողում ամբողջական և անկասկած մնացել են հարսնէհակ և շարիաթ բառերը»[21]*:*

Վիմագրի թվագրման հարցում Ս.Բարխուդարյանի մատնանշումը՝ «սպասալարների օրոք» բավական պայմանական է: Մենք կարևորում ենք ԵՐԿԱՐԿԵՆԴԱՆՈՒԹԻԼԻՆ ՊԱՏՐՈՆԱՑ ՄԵՐՈՑ բառակապակցությունը, որը հաճախ է վկայված Իվանեի և Զաքարեի համատեղ իշխանապետության ժամանակահատվածի համար, ըստ այդմ առավել հակված ենք XIII դ. 10-20-ական թվականների նկատառմանը: Երկրորդ տողում ՀԱԿ բառից հետո հաջողվեց վերծանել ԳԵՂԻՍ, այսինքն՝ իրենց գյուղը հարկից ազատելու մասին է խոսքը: Երրորդ տողի սկզբում, դատելով շարադրանքից, հակված ենք կարդալու ...[Թ]ԱԽԱՆՉԵՑԱ:

21 ***Ս.Բարխուդարյան,*** Նշվ. աշխ., էջ 90: